

կեր: Արտասանքով պետք է նշել, որ ցանկերը կազմված են շատ անփութ՝ տողատակերի ոչ բոլոր անուններն ընդգրկելու առումով: Այդ անփութությունն անսպասելի է և չափազանց անցանկալի մի աշխատության մեջ, որն ամբողջությամբ կրում է հեղինակի ուշադիր ու հոգատար ձևերի կնիքը:

Մենագրության արժանիքների թվում պետք է նշել հեղինակի լավ լեզուն ու ոճը:

Լ. Դանեղյանի աշխատությունը որոշակի արժեք է ներկայացնում նաև այն առումով, որ ընթերցողին հնարավորություն է տալիս ծանոթանալ ոչ բոլորին մատչելի պարսկերեն լեզվով գրականությանը՝ աղբյուրներ և ուսումնասիրություններ, որոնք ընդգրկում են Ա. Դավրիժեցու ուշադրության կենտրոնում գտնված պրբլեմները: Դրվատանքի և շնորհակալության է արժանի Լ. Դանեղյանի աշխատանքը նաև պատմիչի կյանքի ու գործունեության վերաբերյալ ցարուցիր, կցկտուր տեղեկություններն ի մի բերելու, սխտեմավորելու և ուսումնասիրելու ուղղությամբ, այնպես որ հեղինակի սկզբնական ժողովրդի համաձայն Սեֆյան Իրանի XVII դ. պատմության տեսանկյունից «Գիրք պատմութեանցի» զնահատմանը նվիրված աշխատությունը գերաճել է իր շրջանակներից և վերածվել Առաքել Դավրիժեցու և նրա երկի վերաբերյալ լուրջ ուսումնասիրության:

ԼԵՆԱ ԽԱՆԼԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների քննիչ:

ԷՎԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ-ԲԱԳԻ, Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Նրևան, 1979, 186 էջ:

Է. Գևորգյան-Բագիի վերջերս հրապարակված «Հայ-հունգարական գրական առնչությունները և «Արմենիա» ամսագիրը» գիրքը նշանակալի ներդրում է հայ-հունգարական մշակութային կապերի ուսումնասիրության առումով: Հունգարահայ գաղթօջախի հասարակական-անտեսական, հոգևոր կյանքի շուրջը գրվել են առանձին հետազոտություններ, հոգվածներ, վեր է հանվել հայ ժողովրդի տարագիր մի հատվածի սոցիալական վիճակը, կենցաղը, ազգագրությունը: Սակայն տակավին քննված ու զնահատված չէր հունգարահայերի հոգևոր կյանքի կարևոր բնագավառներից մեկը՝ գրականությունը: Լրջորեն գիտակցելով իր կատարած գործի կարևորությունը, տիրապետելով հունգարերենին ու հայերենին, Է. Գևորգյան-Բագին իր գրքում հանգամանորեն քննության է առնում XIX դ. վերջի և XX դ. սկզբի հունգարահայ գաղթի պատմությունը, հասարակական-հոգևոր կյանքը, հունգարահայերի հունգարերեն լեզվով հրատարակած «Արմենիա» (1887—1907) ամսագրի գրական, գրականագիտական, հրապարակախոսական, բանահյուսական ամբողջ նյութը:

Գրքի հինգ գլուխներից առաջինը կրում է «Հունգարահայերը և գաղթավայրի մշակութային ու հոգևոր զարթոնքը XIX դարի վերջերին և XX-ի սկզբներին» խորագիրը: Շարադրելով Հունգարիայի տարածքում հայերի հաստատվելու, բնակավայրեր հիմնելու, երկրի լիիրավ քաղաքացիներ դառնալու պատմությունը, թվարկելով հայ գերդաստաններից սերած այն գործիչներին, որոնք Հունգարիայի հասարակական-քաղաքական կյանքում կատարել են զնահատելի դեր, հեղինակը անդրադառնում է մասնավորապես տրանսիլվանահայ գաղթօջախի կազմավորմանը, համայնքի ամրապնդման համար պայքարին: Դրա արտահայտություններից մեկն էլ «Արմենիա» ամսագրի հրատարակությունն էր, որի նշանակությունն անզնահատելի է հունգարահասարակայնությանը հայ մշակույթին ծանոթացնելու գործում: Այս առումով մեծ է ամսագրի հրատարակիչ Խաչիկ Սոնգոտյանի վաստակը: Հեղինակի ընձեռած տվյալներով և Սոնգոտյանը ամսագրում գրել է շուրջ 400 հոդված, չհաշված մի քանի համարներ, որոնք ամբողջովին պատկանում են նրա գրչին: Բացի դրանից և Սոնգոտյանը շարադրել է Գեուլա քաղաքի եռահատոր պատմությունը, «Հունգարահայ ազգագրությունը» (1903), «Հունգարների ծագումը և հին հայրենիքը» (1905), հունգարերեն թարգմանել է Մ. Խորենացու «Հայոց պատմությունը» (1892), և Սոնգոտյանը ամսագիրը գլխավորել է մինչև իր մահը (1907), որից հետո այն դադարել է:

Հետադոտդի ելակետերը ճիշտ են ինչպես խմբագրի գործունեությունը, այնպես էլ ամսագրի ուղղությունն ու նպատակները բնութագրելիս. «Դանդաղեցնել հայերի ձուլումը, փրկել հունգարահայերին օտարացումից, նպաստել հայ ու հունգար ժողովուրդների փոխադարձ վստա-

Նույնն ու հոգևոր մերձեցմանը»։ Այս նպատակով, ինչպես ասված է «Արմենիայի առաջին համարի առաջնորդողում, ամսագրում պետք է տալ գրված չափ ժողովրդի և հունգարահայերի անցյալի ու ներկայի վիպագրության, ժողովրդական բանահյուսության, ծագումնաբանության վերաբերյալ հոգվածներ, գիտական հաղորդումներ, թարգմանությունների միեռցող հունգար-ներին ներկայացվին հայ գրականության նմուշներ։ Քննելով ու ամփոփելով շուրջ քսան տար-վա ծավալուն մի հունձը, է. Գևորգյան-Քազին հանգում է այն եզրակացությանը, որ ամսա-գիրը հիմնականում իրագործել է հետապնդած խնդիրները, իր էջերում մշտապես տեղ հատ-կացնելով նաև հունգարահայերի կյանքին ու կենցաղին, ծագումով հայ հունգար նշանավոր գրողների, արվեստագետների գործունեությանը, այլ գաղթօջախների հիշարժան իրադարձու-թյուններին։

«Արմենիան» հրատարակվում էր մի ժամանակաշրջանում, երբ արևմտահայությանը սպառնում էր բնաշնչման վտանգը։ Անշուշտ, դա չէր կարող վրիպել ամսագրի աշխատակից-ների ուշադրությունից, որի էջերում զգալի տեղ էն գրավում արյունոտ դեպքերի արձագանք-ները։

Գրքի երրորդ՝ «Հունգարահայերի գրական ստեղծագործությունները», զլխի նյութը այն-պիսի գործեր են, որոնց մեծագույն մասը քննվում ու արժեքավորվում են առաջին անգամ։ Դրա համար անհրաժեշտ էր ունենալ գրական որոշակի ճաշակ, էականը անէականից զատելու, վերլուծելու, ընթերցողին կողմնորոշելու և համոզելու ունակություն։ Իր այս ունակություն-ներով է. Գևորգյան-Քազին վերլուծում և ներկայացնում է հունգարալեզու տասնյակ գործեր՝ էմբերկուս Միշալֆիի «Ալմիրա», Ռոզա Շալլակի «Գերուհին», «Զրույց հայ գեղեցկուհու մա-սին», Լադիսլաուս Ըստկարյանի «Վերջին հայը», Գրիգոր Ըստկարյանի «Երազիս տեսա...», Վարդան Աֆղանստանի «Սամոռույվար», «Ասվատուր», Կլարա Կրիտայի «Անեծքը», «Գե-ղեցիկ վարդուհին» և այլն, յուրաքանչյուրի արժեքավորման համար գտնելով նոր դիտակետ, տարբեր բանալիներ։ Մի դեպքում բնութագրվում է գեղեցիկ հայուհու կերպարը, որը խորհրդա-նշում է Հայաստանը, մյուս դեպքում երկի արժեքը առնչվում է գաղութի հասարակական-սո-ցիալական իրավիճակի, ունեցվածքային դրության հետ։ Որոշ գործեր գնահատվում են հուն-գարահայերի կենցաղի, նիստ ու կացի, սովորությունների, առօրյա հոգսերի ու ցավերի անդա-դարձման տեսանկյունից։ Վերլուծվող այս բոլոր գործերում հեղինակի նկատմամբ գերազան-ցապես շոշափվում են հայ ժողովրդի և նրա հունգարահայ հատվածի կյանքին և պատմական բախտին վերաբերող հարցեր։

Նույն զլխում առանձին բաժնով քննության են առնվում նշանավոր գրող ու գիտնական, Բուդապեշտի համալսարանի հայոց լեզվի և գրականության պրոֆեսոր Ղուկաս Պատրուբան-յանի հայերեն և լատիներեն տառադարձությամբ շարադրված բանաստեղծությունները։ «Գե-րեզմաններ», «Փոթորիկը», «Գարունը», «Ծաղիկներ», «Երազը», «Հարավի լճակներ» և մյուս բանաստեղծությունների ոգին հայրենասիրական տրամադրություններն են, հայրենիքի ապա-գալի երազանքը։ Նուրբ վերլուծությամբ մատուցվող քննադատունյ այդ բանաստեղծություննե-րը համակված են տաղանապալից թախիծով և, ինչպես ցույց է տալիս գրքի հեղինակը, մի կող-մից հարազատ են Ղ. Ալիշանի, Մ. Նալբանդյանի, Ե. Շահազիզի, Մ. Պեշկեթյանի, Ռ. Պատ-կանյանի ազատասիրական ոգորումներին, ռոմանտիկական ուղղությանը, մյուս կողմից կրում են հունգար մեծ բանաստեղծ Շանդոր Պետեֆիի քաղաքացիական պոեզիայի ազդեցությունը։ Է. Գևորգյան-Քազին հավաստումով Ղ. Պատրուբանյանի բանաստեղծությունները անկասկա-ծ բոլորքով են հունգարահայերի հայրենասիրական զգացմունքները, նպաստել ազգային ինքնա-գիտակցության արթնացմանը։

Գրքի այս ծանրակշիռ զլխի վերջին հատվածում բնութագրվում է հունգարահայերի բա-նահյուսությունը։ Գաղթօջախի բանահյուսությունը հավաքելն ու հրատարակելը առաջադեմ գործիչների համար եղել է կարևոր խնդիր։ Այդ գործում ևս նորից մեծ է Խ. Սոնգոյանի ծա-ռայությունը։ Նրա «Հունգարահայ ազգագրությունը» արժեքավոր աշխատությունը նախ ամբող-ջությամբ տպագրվել է «Արմենիայի» 26 համարներում։ Այն ամփոփում է բանահյուսական ամենատարբեր նյութեր՝ առակներ, զրույցներ, հանելուկներ, առածներ, անեկդոտներ, հեքիաթ-ներ, ժողովրդական երգեր, «Տաղ ուրախության» լիերնագրով մի կատակ, ճաշակավոր ընտրու-թյամբ և տեղին մեքերումներով ընթերցողներին ներկայացնելով բանահյուսական այս հարստությունը, հեղինակը վեր է հանում գրանցում անդադարձված մարդկային առաքինու-թյան, աշխատասիրության, աղնվության ու արդարամտության բարոյական բարձր ըմբռնում-ները։

Հայ մշակութի միջազգային առնչութիւնների տեսակետից ամենահետադարձականը, անշուշտ, աշխատութեան շորտորդ դուրսն է՝ դարձյալ բաղկացած երեք ենթազիւից, բոլորն էլ շարագրված նյութի համակողմանի իմացութեամբ, գիտական յղումով և շրջաճանցութեամբ։ Ոյ, իշարկն, ամենից առաջ վերաբերում է Դավիդ Մարտոնի «Արա Գեղեցիկ» ողբերգութեան մեկնութեանը։ Ողբերգութիւնը գրվել է XIX դ. 80-ական թվականներին, որը «Արմենիայի» 1896—1897 թթ. համարներում տպագրվելուց հետո, առանձին գրքով հրատարակվել է 1897 թ. 1 է. Գեորգյան-Բագրի մեկնութեամբ՝ ի տարբերութիւն օտարազգի մյուս հեղինակների (Բարիլի, Դարգոն), որոնց մշակումներում Արան մղվել է երկրորդ գիծ, նրա բնորոշ հատկանիշները վերագրվել են ասորական թագուհի Շամիրամին և դրանով իսկ հեռացել հնօրյա առասպելի ոգուց, — Դ. Մարտոնը հիմնականում հարազատ է մնացել առասպելին։ Ողբերգութեան բովանդակութեան մանրամասն շարադրանքին ուղեկցում է կերպարների բնութագրութիւնը առանձին-առանձին, զուգահեռներ են անցկացվում դրանց և առասպելի հերոսների միջև, ցուցադրվում են պատկերավոր արտահայտութեան յուրօրինակութիւններ, ուրվագծվում այն նորը, որ բերել է Դ. Մարտոնը՝ մշակելով առասպելը։ Այս էջերը, անշուշտ, մեծացնում են է. Գեորգյան-Բագրի աշխատութեան արժեքը, որքանով ողբերգութիւնը մինչև այժմ հայտնի չի եղել Հայ հասարակայնութեանը։

Պակաս ուշագրավ չեն նաև սույն գլխի հաջորդ բաժինները. նախ, հունգար գրողներից բաղկած Հայ ժողովրդին վերաբերող այն նյութերի իմաստավորումով, որոնք պարբերաբար ունեցել են «Արմենիայի» էջերում։ Ըստ Լադիսլաուս Ըստկարյանի՝ հայերի մասին հունգար գրողներից առաջին ծավալուն վկայութիւնը թողել է XVIII դ. նշանավոր գրող Կելեմեն Միկեշը։ Ռոմանտիկ քաղաքից գրած համակներում նա նկարագրում է տեղի հայերի կյանքը, կենցաղը, տարազը, գովաբանում նրանց աշխատասիրութիւնն ու առաքինի վարքը։ Է. Գեորգյան-Բագրի գնահատութեամբ՝ Հայ ժողովրդի մի հատվածի կյանքի, բարքերի ու նկարագրի վերականգնման տեսակետից այդ համակները ներկայացնում են ճանաչողական մեծ արժեք։ Ի կարող են դասվել կարևորագույն վավերագրերի շարքը։ Ուշագրավ են նաև Խշտվան Հորվաթի, Մոր Յոկայի, Կալման Միկաստիի և ուրիշների ասույթներն ու վկայութիւնները։

Այնուհետև քննվում են ամսագրում տեղ գտած առաջին թարգմանութիւնները՝ հունգար գրողներից. Ֆերենց Կելեմենի «Հիմնը», Միհայ Վերեշմարտիի «Բարբառը» և Շանգոր Պետեոֆիի «Կողողա թուխը» բանաստեղծութիւնները։ Ենթադրվում են հատկապես այդ բանաստեղծութիւնները թարգմանելու շարժառիթները, միաժամանակ նշվում այն պատճառները, որոնք չեն խթանել թարգմանութիւնը հունգար գրականութիւնից։ Կարելի էր ցանկանալ միայն, որ հեղինակը, փոքր-ինչ ավելի ընդարձակ տեղ հատկացներ այս հարցերին, մասնավորապես անդրադառնալով Ե. Պետեոֆիի ազատասիրական հզոր բանաստեղծութեան արձագանքներին ու հնչողութեանը առհասարակ Հայ իրականութեան մեջ։

Աշխատութեան վերջին՝ հինգերորդ, գլխի նյութն արդեն «Արմենիայում» Հայ գրականութիւնից տպագրված թարգմանութիւններն են, ապա՝ Հայ գրականութեանը նվիրված հոդվածները։ Է. Գեորգյան-Բագրի տվյալներով հունգարերեն թարգմանված այդ գործերի գերակշռող մասը XIX դ. հայ քաղաքացիական բանաստեղծութեան ընտիր նմուշներն են՝ Ղ. Ալիշանի, Մ. Պեշիկիշաշլյանի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Ե. Շահագիրի, Պ. Դուրյանի, Լ. Հովհաննիսյանի բանաստեղծութիւնները։ Եվ դա միանգամայն բնական էր, քանի որ ծանր էր Հայ ժողովրդի ճակատագիրը, և այդ ճակատագրով էր ապրում նաև հունգարահայ գաղութը։ Նման պայմաններում թարգմանվել են այնպիսի գործեր, որոնք համապատասխանել են ամսագրի հայրենասիրական շահախնդրութիւններին։ Հայ գրականութիւնը հունգար հասարակայնութեանը ծանոթացնելու գործում ամսագրի ծառայութիւնների մասին խոսելիս գնահատելի է, որ հեղինակը չափազանցութիւնների մեջ չի ընկնում. հանգամանորեն անդրադառնալով թարգմանութիւններին, նա ցույց է տալիս, որ դրանք մեծապես ունենել են ճանաչողական նշանակութիւն և քննութիւն չեն բռնում թարգմանական արվեստի առումով։

Հայ գրականութեանը նվիրված առաջին հոդվածը՝ ըստ Դյորդ Ռադոյի, տպագրվել է 1835-ին «Տոգոմանոշ Դյոտեմեն» ամսագրում և պատկանում է ժամանակի ճանաչված գիտնականներից մեկի՝ Իշտվան Հորվաթի գրչին։ Եղիշի «Վարդանանց պատերազմի» ընձեռնած տվյալներով Ի. Հորվաթը շարադրել է իր գիտելիքներն ու խոհերը Հայ ժողովրդի և գրականութեան շուրջը, որոնք առնչութիւններ հայոց և Հունգարիայի պատմութեան միջև։ Գրվել են այլ քննական հոդվածներ ևս, բայց առավել ուշագրավ են այն հոդվածները, որոնք զետեղվել են «Արմենիա» ամսագրում։ Է. Գեորգյան-Բագրի հիմնավորումով՝ դրանցից լավագույններն են Ա. Մուրարյանի, Լ. Ըստկարյանի, Ղ. Պատրուբանյանի, Խ. Սոնգոտյանի և Գ. Գոլբիկյանի

տարբեր ժամանակներում գրած հոդվածները: Դրանցով ներկայացվում է հայ գրականության անցած ուղին, պատմագրության ամբողջական պատկերը, միջնադարյան գրականությունը, հատկապես առակագրությունը, աշուղական բանաստեղծությունը: Բնականաբար առավել ուշագրություն է դարձվել XIX դ. գրականությանը՝ Խ. Աբովյանի, Ղ. Ալիշանի, Ռ. Պատկանյանի, մասնավորապես Բաճեու ստեղծագործություններին:

Ինչպես գրքի բոլոր, այնպես էլ այս զլխում է. Գևորգյան-Բազիի եզրակացությունները հիմնավոր են ու փաստալից: Համակողմանիորեն տիրապետելով նյութին, ամեն անգամ նա իր խոսքի ճշմարտությունը ցուցադրում է փաստական հավաստի տվյալներով: Սակայն, այդուհանդերձ, գրքում տեղ են գտել փաստական որոշ մանր վրիպումներ: Գրքի 21-րդ էջում տողատակին հիշատակվում է Ս. Քոլանյանի «Армяне в Трансильвании и их культура» հոդվածը և նշվում, թե տպագրվել է «Литературная Армения» ամսագրի 1962 թ. № 2-ում: Այնինչ ամսագրի այդ համարում այդպիսի հոդված չկա: Մի վրիպում ևս. գրքի 38-րդ էջում ասված է, որ 1913-ին հրատարակվել է «Արմենիայի» միայն մեկ համար: ՆՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի 1969 թ. № 5-ում (էջ 48) նշված է երկուսը: Եանոթ լինելով «Լրաբերի» հոդվածին, չգիտես ինչու, հեղինակը հարկ չի լծարել ճշտել այսօրվա կլինե՞ր նաև, եթե գրքում զետեղված լինե՞ր «Արմենիա» ամսագրի շապկանկարը:

Է. Գևորգյան-Բազին ստեղծել է լուրջ աշխատություն, որի արժեքը մեծ է հայ մշակույթի միջազգային փոխառնությունների ուսումնասիրության տեսակետից, մասնավոր, որ այն վերաբերում է մշակութային կապերին մի ժողովրդի հետ, որի հողի վրա ապաստանել են հայ ժողովրդի աստանդական զավակները, սրտաբաց ընդունելություն գտնելով՝ բարգավաճել և սերունդներին են թողել հոգևոր գնահատելի ժառանգություն, ժողովուրդների բարեկամության անուրանալի ճշմարիտ ավանդներ:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ